Հաստատված IEB՝

SEIU ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԽՄԲԻ
ՈՒՂԵՑՈՒՅՑ

I. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ապացուցվել է, որ նախընտրական խմբերը հանդիսանում են աջակցության, շահերի պաշտպանության, տեղեկատվության փոխանակման և առաջնորդության զարգացման կարևոր միջոցներ: Դրանք կարող են ձայներ ապահովել տարբեր ընտրատարածքների համար համայնական զգացողությամբ փոխադարձ հարգանքի միջավայրում: Դրանք նպաստում են տարբեր ընտրատարածքներում փորձի, մտքերի և գործերի փոխանակմանը SEIU-ի անդամների հետ, ինչն ընդհանուր առմամբ ավելացնում է անդամների մասնակցությունը գործընթացին: Նախընտրական խմբերը կարող են արդյունավետ միջոց հանդիսանալ սովորելու և առաջնորդելու փորձ ստեղծելու համար: Եվ դրանք կարող են ռեսուրս հանդիսանալ SEIU-ի համար՝ գնահատելու Միջազգային Միության ջանքերը ընտրողների որոշակի խմբի տեսանկյունից:

Հետևաբար, Միջազգային Միության հետ ներկայումս գործող նախընտրական խմբերի գործունեության նպատակը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով՝

A. SEIU-ի անդամակցության առաջնային բազմազանությունը որպես ուժի աղբյուր՝ միութենականության, ընդգրկման, հզորացման և ինքնորոշման սկզբունքների միջոցով,

B. մշակել, պաշտպանել և վերահսկել ընտրողների կողմից հայտնաբերված խնդիրները և կրթության միջոցով աշխատել Միջազգային Միության հետ,

C. ծառայել որպես ռեսուրս Միջազգային Միությանը՝ կազմակերպչական, քաղաքական գործունեության և համայնքների ներգրավման գործերում,

D. նպաստել և խթարել առաջնորդության զարգացմանը և դասընթացներին՝ Միության ներկայացուցչության բոլոր մակարդակներով:

II. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Հետևյալ նախընտրական խմբերը Միջազգային Միության կողմից պաշտոնապես ճանաչվել են Միջազգային Միության գործունեությանը մասնակցելու և Միջազգային Միության ռեսուրսները ստանալու համար, Աֆրիկյան Ամերիկյան Նախընտրական խումբ (AFRAM), Ասիական-Խաղաղօվկիանոսյան Նախընտրական խումբ, Բնիկ ամերիկացիների Նախընտրական խումբ, Միջազգային Լատինաամերիկյան Նախընտրական խումբ, Լավանդա Նախընտրական խումբ, Հաշմանդամություն ունեցող Մարդկանց Նախընտրական խումբ, Թոշակառուների Նախընտրական խումբ և Կանանց Նախընտրական խումբ:

Լրացուցիչ նախընտրական խմբերի կազմը կարող է պաշտոնապես ճանաչվել Միջազգային Միության կողմից քվեարկությամբ՝ Միջազգային Միության յուրաքանչյուր Համագումարի ընթացքում:

Նախընտրական խմբերը կարող են գոյություն ունենալ տեղական, ռեգիոնալ և ազգային մակարդակով: Այնուամենայնիվ, խմբերի կազմավորումը պետք է սկսվի տեղական մակարդակով, իսկ հետո նոր անցնի տարածաշրջանային և ազգային մակարդակի կազմավորման: Տեղացի մի շարք բնակիչներ կարող են քվեարկել՝ որոշակի աշխարհագրական տարածաշրջանում ռեգիոնալ նախընտրական խումբ ստեղծելու համար, որը ենթակա է Միջազգային Գործադիր Խորհրդի հաստատմանը:

Հաստատված IEB՝

Ազգային Նախընտրական խմբի Կազմավորումը

Նախընտրական խումբը կարող է «ազգային» ճանաչվել միայն այն բանից հետո, երբ տեղական և ռեգիոնալ զարգացման կայուն և հաստատված կառուցվածքները այդ մասին վկայություն տան, և երբ հետևյալ չափանիշներից առնվազն մեկը բավարարված է՝

A. Ռեգիոնալ չորս նախընտրական խմբերից առնվազն երեքը քվեարկում են ազգային նախընտրական խումբ կազմելու համար:

B. Միջազգային Գործադիր Խորհրդի Հաստատումը

III. ՆՊԱՍՏՈՂ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

A. Ոչ մի նախընտրական խմբի Սահմանադրություն և/կամ կառավարման փաստաթուղթ չպետք է հակասի Միջազգային Միության Սահմանադրությանը և կանոնադրությանը:

B. Ցանկացած ազգի նախընտրական խումբ կարող է SEIU-ի քաղաքականությանը վերաբերող բոլոր առաջարկությունները և բանաձևերը փոխանցել Միջազգային Նախագահի կողմից նշանակված համապատասխան հանձնաժողովին:

C. Նախընտրական խմբերը չպետք է միջամտեն Տեղական Միությունների գործերին, չպետք է հրապարակային արտահայտություններ անեն Տեղական Միությունների գործերի մասին կամ հաստատեն Տեղական Միության գրասենյակի կամ Միջազգային միության գրասենյակի թեկնածուներին:

D. Ցանկացած նախընտրական խումբ պարտավոր է նրբանկատ գտնվել մյուս նախընտրական խմբերի հարցերի նկատմամբ և նպաստել սոցիալական արդարության հայեցակարգին:

IV. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

A. Որոշումները/քվեները պետք է սահմանվեն նախընտրական խմբի կողմից և հիմնված լինեն մեկ տեղական՝-մեկ քվե կամ մեկ անձ՝-մեկ քվե հայեցակարգի վրա: Որոշումները/քվեները պետք է նշանակվեն՝ նպաստելու Տեղականի/նախընտրական խմբի զարգացմանը և համախմբմանը:

B. Նախընտրական խմբերը պետք է ստեղծեն ընտրական գործընթաց՝ պաշտոնատար անձանց ընտրելու համար: Նախընտրական խմբերը կարող են ստեղծել Գործադիր Հանձնաժողով իրենց հայեցողությամբ: Ազգային կամ տարածաշրջանային նախընտրական խմբի Գործադիր Հանձնաժողովը կունենա իրավասություն իրենց հատուկ նախընտրական խումբը Միջազգային Միության ղեկավարությանը ներկայացնելու և մնացած բոլոր հարցերում:

C. Տեղականների՝ լավ համբավ ունեցող բոլոր անդամներն ունեն նախընտրական խմբի անդամակցության իրավասություն:

D. Որտեղ որ կա ազգային հանձնախումբ, նախընտրական խմբերը պետք է նշանակեն մի անձի, ով կճանաչվի որպես առաջնային կոնտակտային անձ՝ Միջազգային Միության հարաբերությունների նպատակով:

Տեղական և տարածաշրջանային նախընտրական խմբերը միմյանց հետ կիսում են իրենց հուզող հարցերի վերաբերյալ համաձայնության կարծիքները Միջազգային Միությանը ներկայացնելու պատասխանատվությունը:

V. ԶԵԿՈՒՅՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

A. Բոլոր նախընտրական խմբերն իրենց Սահմանադրության և Կանոնադրության պատճենը պետք է տրամադրեն և ներկայացնեն Միջազգային Միության պաշտոնատար անձանց և Միջազգային Նախագահի կողմից նշանակված համապատասխան հանձնաժողովի նախագահ(ներ)ին: Ցանկացած նախընտրական խումբ պետք է Միջազգային Միությանը նորից ներկայացնի այդպիսի Սահմանադրության և Կանոնադրության պատճեններն այն ժամանակ, երբ դրանք փոփոխվում են:

B. Նախընտրական խմբերը պետք է տրամադրեն գործունեության առաջընթացի մասին զեկույցներ ***տարեկան երկու անգամ*** Միջազգային Նախագահի կողմից նշանակված համապատասխան հանձնաժողովին:

VI. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

A. Յուրաքանչյուր նախընտրական խումբ կունենա Միջազգային Միությունից գործառնական ծրագրի աջակցության համար տարեկան ներդրում հայցելու իրավասություն: **Ազգային** կառուցվածք ունեցող նախընտրական խմբերը որպես տարեկան ներդրում կստանան 25.000 ԱՄՆ դոլար: Նախընտրական խմբերը՝ ֆինասավորմանն ուղղված հայցերը պետք է գրավոր կերպով ներկայացվեն Միջազգային Միությանը նախքան յուրաքանչյուր օրացուցային տարվա ավարտ:

B. Որտեղ որ կա ազգային նախընտրական խումբ, **տարածաշրջանային** նախընտրական խումբը ֆինանսական աջակցություն ստանալու համար պետք է ներկայացնի տարեկան բյուջեի և աշխատանքի նախագիծ՝ Միջազգային Միության նպատակներին և առաքելությանը համապատասխան: Հատուկ ազգային նախընտրական խմբի կառուցվածքի ներքո գտնվող տարածաշրջանային և/կամ տարածքային նախընտրական խմբերն իրենց ազգային նախընտրական խմբի ղեկավարությանը պետք է ներկայացնեն ֆինանսավորմանն ուղղված իրենց հայցը բյուջեի և աշխատանքի նախագծի հետ միասին՝ Միջազգային Միության նպատակներին և առաքելությանը համապատասխան:

C. Որտեղ որ չկա ազգային նախընտրական խումբ, **տարածաշրջանային** նախընտրական խմբերը գործառնական ծրագրի աջակցության համար Միջազգային Միությունից կարող են ստանալ 5.000 ԱՄՆ դոլար: Տարածաշրջանային նախընտրական խմբերը Միջազգային Միությանը կարող են ներկայացնել լրացուցիչ ծրագրային և/կամ գործառնական ֆինանսավորման հայց՝ պայմանով, որ նմանօրինակ ֆինանսական միջոցներ հայցող յուրաքանչյուր նախընտրական խումբ համառոտ նկարագրի՝ ինչպես են օգտագործվել նախնական ֆինանսական միջոցներն իրենց նպատակների և աշխատանքային նախագծի/ծրագրի հիման վրա, և թե որքանով են նրանք հաջողակ եղել իրենց աշխատանքի իրականացման մեջ: Նմանօրինակ աշխատանքային ծրագիրը պետք է համապատասխանի Միջազգային Միության նպատակներին և առաքելությանը: Լրացուցիչ ֆինանսավորման հայցը պետք է նաև համառոտ նկարագրի և պատճառաբանի՝ ինչպես են այդ լրացուցիչ ֆինանսական միջոցներն օգտագործվելու: Առանձին տարածաշրջանային/տարածքային նախընտրական խմբին տրամադրվող տարեկան ֆինանսավորման համախառն գումարը չպետք է գերազանցի SEIU-ի յուրաքանչյուր նախընտրական խմբին տրամադրվող տարեկան մասնաբաժինը:

D. Ազգային նախընտրական խմբերը պետք է ներկայացնեն եռամսյակային

ֆինանսական հաշվետվություններ Միջազգային Միությունից ստացված ֆինանսական միջոցների բաշխման և օգտագործման վերաբերյալ:

E. Միջազգային Նախագահի կողմից նշանակված համապատասխան հանձնաժողովի ենթահանձնաժողովը կվերահսկի հայցվող ֆինանսական միջոցների հաստատումը և բաշխումը:

F. Շարունակվող ֆինանսավորում ստանալու համար նախընտրական խումբը (լինի դա՝ ազգային, տարածաշրջանային, թե տարածքային) պետք է ներկայացնի տարեկան հաշվետվություն, որտեղ համառոտ կնկարագրվի՝ ինչպես են ֆինանսական միջոցներն օգտագործվել ծրագրի աշխատանքային նախագծի/ծրագրի նպատակների իրականացման համար և այլն, և թե որքանով են նրանք հաջողակ եղել իրենց աշխատանքի իրականացման մեջ:

G. Ազգային նախընտրական խմբերը կարող են ներկայացնել լրացուցիչ ֆինանսավորման հայց՝ իրենց տարեկան խորհրդաժողովին աջակցելու համար, պայմանով, որ նրանք (նախապես) ներկայացնեն առաջարկություն, որտեղ համառոտ կնկարագրվի՝ ինչպես են այդ լրացուցիչ ֆինանսական միջոցներն օգտագործվելու: